ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ
№2024-10-5-Ա

ք. Երևան 09.10.2024թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2024 թվականի հոկտեմբերի 9-ի նիստում քննարկեց 2024 թվականի սեպտեմբերի 10-ին Լևոն Նուրազյանի կողմից ներկայացված «Ոսկեվազի գինու գործարան» ՍՊԸ ընկերության (Արագածոտնի մարզ, 0220, Ոսկեվազ համայնք, 8-րդ փ., 19շ, գինու գործարան, ԱՄ) «ՄԱՏՈՒՌ MATУP MATUR» (№20232619) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը հակասում է հասարակական կարգին, մարդասիրության կամ բարոյականության սկզբունքներին, ինչպես նաև անհարիր է ազգային կամ հոգևոր արժեքներին: Փորձաքննության ժամանակ հաշվի է առնվում այն, որ ազգային և հոգևոր արժեքներ են համարվում նյութական, գիտական, մշակութային արժեքները, ինչպես նաև հոգևոր արժեքները: «Արժեք» հասկացությամբ նշվում է այն հանգամանքը, որ մարդկային գործունեության մեջ ներգրավված իրականությունը ձեռք է բերում մի նոր հատկանիշ, այն իմաստավորվում է հասարակական-մշակութային և հոգևոր ենթատեքստում և դառնում որոշակի գնահատականների առարկա: Օրինակ, խաչքարը ճարտարապետական հուշարձան է, սակայն հայ ժողովրդի իրականության մեջ այն ձեռք է բերել մի նոր հատկանիշ: Մեր ազգային մտածելակերպին անհարիր է, օրինակ, օղու պիտակի վրա զետեղել մեր սրբերից որևէ մեկի անունը կամ պատկերը, եկեղեցու պատկերը: Տվյալ դեպքում հայտարկված «ՄԱՏՈՒՌ MATУP MATUR» նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ, անկախ լատինատառ և կյուրեղատառ տառադարձումներին, «ՄԱՏՈՒՌ» են կոչվում փոքր եկեղեցիները, աղոթատեղերը, ինչպես նաև եկեղեցիների օծված ավանդատները, ուստի մեր ազգային և հոգևոր մտածելակերպին հարիր չէ այն զետեղել ալկոհոլային խմիչքի պիտակի վրա:

Կոլեգիայի նախագահը նշեց, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը

հակասում է հասարակական կարգին, մարդասիրության կամ բարոյականության սկզբունքներին, ինչպես նաև անհարիր է ազգային կամ հոգևոր արժեքներին: Ազգային և հոգևոր արժեքներ են համարվում նյութական, գիտական, մշակութային արժեքները, ինչպես նաև հոգևոր արժեքները: Տվյալ դեպքում հայտարկված «ՄԱՏՈՒՌ MATUR» նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ, անկախ լատինատառ և կյուրեղատառ տառադարձումներին, «ՄԱՏՈՒՌ» են կոչվում փոքր եկեղեցիները, աղոթատեղերը, ինչպես նաև եկեղեցիների օծված ավանդատները, ուստի մեր ազգային և հոգևոր մտածելակերպին հարիր չէ այն զետեղել ալկոհոլային խմիչքի պիտակի վրա:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Լևոն Նուրազյանի կողմից ներկայացված «Ոսկեվազի գինու գործարան» ՍՊԸ ընկերության «ՄԱՏՈՒՌ MATUR» (No20232619) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել, փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ